ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ԼԻՑԵՆԶԻԱ

*ՄԻՋՆԱԿԱՐԳ* հանրակրթական
(ծրագրի անվանումը)

*ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ*

ՍԵՐԻԱ Ա № 0154

Սույնով վավերացվում է, որ

«ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
(կազմակերպության լրիվ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը)

Թբիլիսյան խճուղի թիվ 11/11
(գտնվելու վայրը)

Թբիլիսյան խճուղի թիվ 11/11
(գործունեության իրականացման վայրը)

*Իրավունք ունի իրականացնելու*

**Միջնակարգ** հանրակրթական
(ծրագրի անվանումը)

**հանրակրթական ծրագիր**

ՆԱԽԱՐԱՐ ____________ (ստորագրությունը)

*Ա. Աշոտյան*
(անունը, ազգանունը)

Կ.Տ.

«09» *հունիսի* 2011թ.

*Անժամկետ*
(լիցենզիայի գործողության ժամկետը)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**
**ՀՐԱՄԱՆ**

№ 806 - Ա/Ք «29» օգոստոսի 2012թ.

<<ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ, ՀԱՄԱԿԱԶՄԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԵՐԻ ԹԻՎԸ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 09.07. 2011Թ. N792-Ա/Ք ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Իրավական ակտերի>> մասին ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված հավելված 7-ի 8-րդ կետի պահանջներով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ>> հիմնադրամին տալ միջնակարգ հանրակրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային տեղերի թիվը 168-ով ավելացնելու թույլտվություն և, այդ կապակցությամբ 09.07.2011թ ՀՀ կրթության և գիտության նախարարի 792-Ա/Ք հրամանի 1. կետի 2-րդ տողի <<72>> թիվը փոխարինել <<240>> թվով:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման գործակալության պետ Մ. Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Ղազարյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
## ՀՐԱՄԱՆ

№ 792-Ա/Ք «05» 07 2011

<<ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ
ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Լիցենզավորման մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թ հուլիսի 9-ի <<Հայաստանի Հանրապետությունում կրթական ծրագրերի իրականացման (բացառությամբ բժշկական միջին և բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրերի) լիցենզավորման կարգերը, լիցենզիայի ձևերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 7-ի N 372 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին>> N 808-Ն որոշմամբ հաստատված <<Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացման լիցենզավորման կարգ>>-ի 8-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության <<Կրթական ծրագրերի իրականացման լիցենզավորման հանձնաժողովի>> եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. <<ԱՅԲ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՆԳՈՒՅՑ>> հիմնադրամին վերապահումով տալ միջնակարգ հանրակրթական ծրագրով, առկա ուսուցմամբ, համակազմի սահմանային 72 տեղով կրթական գործունեության լիցենզիա /լիցենզիան կտրվի անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականի առկայությունը ապահովվելու դեպքում/:

2. Սույն հրամանի կատարման կազմակերպումը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության աշխատակազմի լիցենզավորման վարչության պետ Մ. Մովսիսյանին:

3. Հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի տեղակալ Ա. Ավետիսյանին:

Ա. ԱՇՈՏՅԱՆ